**Հասցեատեր՝**

«Փյունիկ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcpyunik.am

**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության**

**Կարգապահական և էթիկայի կոմիտեի**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**08.04.2024թ.**

| | |
|---|---|
| Նախագահ | Կարեն Հովհաննիսյան |
| Անդամներ | Հենրիկ Խաչատրյան |
| | Արփի Լազարյան |
| | Նարեկ Ադամյան |
| | Դավիթ Բակլաչյան |

---

| | |
|---|---|
| **Վարույթ՝** | Կ-008 |
| **Խախտում՝** | «Փյունիկ ՖԱ» ՀԿ կողմից ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 19-րդ կետով սահմանված առնվազն մեկ ֆուտզալի թիմ ունենալու պահանջը չբավարարելը |

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

Տուգանել «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի՝ 2,000,000 ՀՀ դրամի չափով:

**ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝**

**Կարեն Հովհաննիսյան**

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: